ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 91-րդ հոդվածի 7-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի քննարկման համար սահմանել հետևյալ ընթացակարգը՝

1) Մինչև 5 րոպե տևողությամբ հիմնական ելույթով հանդես է գալիս հիմնական զեկուցողը:
2) Հիմնական և հարակից զեկուցողին հարցեր տալու համար սահմանվում է հետևյալ ժամանակացանկը՝
   ա. հարցերի համար՝ մեկական րոպե,
   բ. հարցերին պատասխանելու համար՝ երկուական րոպե,
   գ. հարցերին և պատասխաններին արձագանքելու համար՝ մեկական րոպե.
3) Մտքերի փոխանակության համար հատկացվում է երկուական րոպե:
4) Հայտ ներկայացնելու դեպքում մինչև 2 րոպե տևողությամբ ելույթ են ունենում խմբակցությունների մեկական ներկայացուցիչ:
5) Մտքերի փոխանակությունն ավարտվում է հիմնական զեկուցողի՝ մինչև 3 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով:
6) Մտքերի փոխանակություն ավարտվելուց հետո նիստը նախագահողը հայտարարում է նախագծի քննարկման ընդմիջում առնվազն 24 ժամ՝ նախագծի վերաբերյալ գրավոր առաջարկներ ներկայացնելու համար:

2. «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերսկսումը կազմակերպել սույն որոշման առաջին մասի 6-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից հետո:

3. «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերսկսման քննարկման համար սահմանել հետևյալ ընթացակարգը՝

1) Մինչև 5 րոպե տևողությամբ հիմնական ելույթով հանդես է գալիս հիմնական զեկուցողը՝ նախագծի վերջնական տարբերակը և առաջարկությունների ամփոփաթերթիկը ներկայացնելու համար:

2) Նախագծի վերաբերյալ առաջարկ ներկայացրած պատգամավորների կողմից հարցեր տալու համար սահմանվում է հետևյալ ժամանակացանկը՝

ա. հարցերի համար՝ մեկական րոպե,

բ. հարցերին պատասխանելու համար՝ երկուական րոպե,

գ. Հարցերին և պատասխաններին արձագանքելու համար՝ մեկական րոպե:

3) Հայտ ներկայացնելու դեպքում մինչև 2 րոպե տևողությամբ կարող են ելույթ ունենալ առաջարկություն ներկայացրած պատգամավորները, խմբակցությունների մեկական ներկայացուցիչ, Ազգային ժողովի նախագահը և տեղակալները:

4) Մտքերի փոխանակությունն ավարտվում է հիմնական զեկուցողի՝ մինչև 3 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով: